ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2021 թ. N 42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ *ՀՀ ք. Երևան, Տերյան փող., շենք 74*

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 21.03.2015թ.- 21.03.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի մարտի 15-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՀԱԱՀ կամ Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀԱԱՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են

փորձագիտական խմբի անդամների և համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 13 դեկտեմբերի 2018թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 28 հոկտեմբերի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 9-12 դեկտեմբերի 2019թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 5 մարտի 2020թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 11 մայիսի 2020թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

ՀԱԱՀ-ն հաշվի առնելով նախորդ գնահատման խորհրդատվությունները, իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ մի շարք ոլորտներում:

1.* Առկա են հիմնարար խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ*:

ՀԱԱՀ կրթական ծրագրերի փաթեթը և դրա իրականացումը, այդ թվում՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը, դեռևս ամբողջական փոխկապակցված չեն, և լիարժեք չեն ապահովում արդի, գործնական հմտություններով, ՈԱԾ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը: Վերջնարդյունք-դասավանդում-գնահատում փոխկապակցված գործընթացը դեռևս ներդրման փուլում է, թույլ է հետազոտական բաղադրիչի առկայությունը, առանձին դեպքերում առկա են բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի կրկնություններ:

Առկա չեն ՄԿԾ-ից բխող ՊԴ անձնակազմի համար սահմանված պահանջներ: Չնայած առկա է որակավորված ՊԴ կազմ, նաև հարուստ պրակտիկ փորձ ունեցող, սակայն այդ կազմի մոտ վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի վերաբերյալ պատկերացումները նոր են և, ըստ այդմ, ծրագրերի իրականացումը և նպատակների հասանելիությունը ռիսկային է:
Չնայած կարճ ժամանակում ռեսուրսային բազայի զարգացման բավականին դրական միտումներին՝ բուհի նյութատեխնիկական բազան ընդհանուր առմամբ դեռևս հին է և արդիականացման անհրաժեշտությունը խիստ տեսանելի: Իսկ առանձին կրթական ծրագրերի ուղղությամբ իրականացված բարելավումներն ու տեխնիկական վերազինումը կադրերի պատրաստման հարցում լուրջ դերակատարություն կարող են ունենալ ապագայում

միայն, երբ այդ լաբորատոր և գիտաարտադրական բազաները կմտնեն ամբողջական կիրառման մեջ և կկիրառվեն կրթական ծրագրերի և ուսանողների կարիքներին համապատասխան:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

Կառավարումը հանդիսանում է ՀԱԱՀ-ի ուժեղ կողմը, այն ապահովում է ռազմավարության ձևավորումը և իրականացվում է որակի կառավարման սկզբունքներով: Համալսարանի կառավարումը միտված է շուկայի պահանջարկի բավարարմանը, և բավականին արդյունավետ է ներքին բարեփոխումների իրականացման տեսանկյունից: Բուհի ղեկավարները նաև հաշվետու են շահակիցներին երկարաժամկետ և կարճաժամկետ աշխատանքների իրականացման համար:

Որակի կառավարումը շատ կարևորված է ՀԱԱՀ-ում և հանդիսանում է փոփոխությունների շարժիչ ուժերից մեկը՝ ունի անհրաժեշտ բոլոր ռեսուրսները և անկախությունը իր աշխատանքը կատարելու համար:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը

ՀԱԱՀ-ի հետազոտական միջավայրը դեռևս չի համապատասխանում զարգացման նպատակներին, սակայն ստեղծված միջավայրը և զարգացման միտումները վկայում են այս ուղղությամբ մոտ ապագայում բուհի շոշափելի արդյունքներին հասնելու մասին: Միջազգայնացումը հանդիսանում է ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերից մեկը, որը նպաստում է ոչ միայն ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ զարգացմանը, այլև տրամադրում է այդ զարգացման համար զգալի ռեսուրսներ (նաև ֆինանսական): Համալսարանը նաև ապահովում է սոցիալական պատասխանատվությունը, արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը: Այս ամենը լուրջ զարգացման հնարավորություններ են ստեղծում՝ պայմանով, որ բարեփոխումների տեմպը չդանդաղի:

4. Առկա թերացումներն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի կողմից ներկայացված ծրագիրը հիմնականում իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Ծրագրով պլանավորված բարեփոխումները կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում՝

ՈՐՈՇԵՑ

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

ա) **«Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի ցուցիչների չափելիության հստակեցման անհրաժեշտությունը,

գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական և մարդկային ռեսուրսների հստակեցման անհրաժեշտությունը,

գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

ա) բոլոր ՄԿԾ-ների բարելվմանը, համապատասխանեցնելով բուհի որդեգրած առաքելությանը,

բ) ՄԿԾ-ների հետազոտական բաղադրիչի ուժեցմանը՝ նպաստելով ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձևավորմանը

գ) դասախոսական կազմի կարողությունների ուժեղացմանը՝ նոր ներդրվող ՄԿԾ-ների նպատակների արդյունավետ իրականացման համար,

դ) նոր ներդրվող ՄԿԾ-ների ռեսուրսային հագեցվածության կայուն ապահովմանը և գործատուների հետ համատեղ ռեսուրսների համատեղ օգտագործման քաղաքականության որդեգրմանը,

ե) արտաքին միջավայրի համակարգված վերլուծությունների իրականացմանը,

զ) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը և կայունության ապահովմանը,

է) որակի ապահովման համակարգի զարգացմանը և որակի մշակույթի և լավ փորձի տարածմանը

4. Կազմակերպել ՀԱԱՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:

5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀԱԱՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ., մարտի 15
ք.Երևան